ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/7

ք. Երևան «06» փետրվարի 2025թ.

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Վահանյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էդմոնդ Միրզախանյան» ԱՁ-ը, ի դեմս գործադիր տնօրեն Էդմոնդ Միրզախանյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ ի (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելո ւպայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1),և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է առավելագույնը 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հունվարի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.+ Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մրցակցության պաշտպանության հանձնաժողով	«Էդմոնդ Միրզախանյան» ԱՁ
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4	Հասցե՝ ք. Երևան Պարոնյան 1
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան	Կոնվերս Բանկ ՓԲԸ
գործառնական վարչություն	
Հ/Հ 900011566057	Հ/Հ 1930059220940100
ՀՎՀՀ 01538354	ՀՎՀՀ 83629841
Ա. Վահանյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
	Կ.Տ.

Հավելված N 1
«06» փետրվարի 2025թ. կնքված
ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/7 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը*
1	50311240/1	Կատարողը պետք է մատուցի Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հաշվեկշռում առկա պատճենահանող, տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր): Փոխարինված մասերը և օգտագործվող նյութերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Ծառայությունների ցանկը կցվում է Հավելված 1.1-ով:	դրամ	300 000	1	ՀՀ, ք. Երևան Տիգրան Մեծ 4	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից, մինչև 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մրցակցության պաշտպանության
հանձնաժողով
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էդմոնդ Միրզախանյան» ԱՁ
Հասցե՝ ք. Երևան Պարոնյան 1
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930059220940100
ՀՎՀՀ 83629841

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«___» փետրվարի 2025թ. կնքված
ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/7 ծածկագրով պայմանագրի

Ցանկ

Պատճենահանող, տպիչ սարքերի վերանորոգման ծառայությունների

Հ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը
	HP Laser Jet 1536 dnf MFP		
	որից՝		
1	մատուցի HP Laser Jet 1536 dnf MFP համարժեք լազերային տպիչ սարքերի դիագնոստիկա	դրամ	0
2	մատուցի HP Laser Jet 1536 dnf MFP և համարժեք լազերային տպիչ սարքերի պրոֆիլակտիկա	դրամ	5000
3	մատուցի HP Laser Jet 1536 dnf MFP և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում(առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	դրամ	1500
4	մատուցի HP Laser Jet 1536 dnf MFP և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում(ներառյալ տոները): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	դրամ	3000
5	թմբուկի փոխարինում	դրամ	3000
6	մագնիսական գլանակի փոխարինում	դրամ	3000
7	ռետինե մաքրող փոխարինում	դրամ	2000
8	ռետինե գլանակի փոխարինում	դրամ	2000
9	առաջնային լիցքավորման գլանի փոխարինում	դրամ	2000
10	մաքրող դանակի փոխարինում	դրամ	3000
11	դոզավորող դանակի փոխարինում	դրամ	3000
12	մատուցի HP Laser Jet 1536 dnf MFP և համարժեք լազերային տպիչ սարքերի վերանորոգում (առանց պահեստամասերի)	դրամ	0

13	մատուցի HP Laser Jet 1536 dnf MFP և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	8000
14	մատուցի HP Laser Jet 1536 dnf MFP և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	12000
15	մատուցի HP Laser Jet 1536 dnf MFP և համարժեք լազերային տպիչ սարքերի թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	6000
	HP Laserjet Pro MFP M426dw		
	որից՝		
16	մատուցի HP Laserjet Pro MFP M426dw համարժեք լազերային տպիչ սարքերի դիագնոստիկա	դրամ	0
17	մատուցի HP Laserjet Pro MFP M426dw և համարժեք լազերային տպիչ սարքերի պրոֆիլակտիկա	դրամ	5000
18	մատուցի HP Laserjet Pro MFP M426dw և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում (առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 2 000 էջ՝ լիցքավորման պահից	դրամ	2000
19	մատուցի HP Laserjet Pro MFP M426dw և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում (ներառյալ տոները): Երաշխիք՝ նվազագույնը 2 000 էջ՝ լիցքավորման պահից	դրամ	3000
20	թմբուկի փոխարինում	դրամ	3000
21	մագնիսական գլանակի փոխարինում	դրամ	3000
22	ռետինե մաքրող փոխարինում	դրամ	2000
23	ռետինե գլանակի փոխարինում	դրամ	2000
24	առաջնային լիցքավորման գլանի փոխարինում	դրամ	2000
25	մաքրող դանակի փոխարինում	դրամ	3000

26	դոզավորող դանակի փոխարինում	դրամ	3000
27	մատուցի HP Laserjet Pro MFP M426dw և համարժեք լազերային տպիչ սարքերի վերանորոգում (առանց պահեստամասերի)	դրամ	0
28	մատուցի HP Laserjet Pro MFP M426dw և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	8000
29	մատուցի HP Laserjet Pro MFP M426dw և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	12000
30	մատուցի HP Laserjet Pro MFP M426dw և համարժեք լազերային տպիչ սարքերի թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	6000
	Canon MF421dw		
	որից՝		
31	մատուցի Canon MF421dw համարժեք լազերային տպիչ սարքերի դիագնոստիկա	դրամ	0
32	մատուցի Canon MF421dw և համարժեք լազերային տպիչ սարքերի պրոֆիլակտիկա	դրամ	5000
33	մատուցի Canon MF421dw և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում(առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 2 100 էջ՝ փոխարինման պահից	դրամ	2000
34	մատուցի Canon MF421dw և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում(ներառյալ տոները): Երաշխիք՝ նվազագույնը 2 100 էջ՝ փոխարինման պահից	դրամ	3000
35	թմբուկի փոխարինում	դրամ	3000
36	մագնիսական գլանակի փոխարինում	դրամ	3000
37	ռետինե մաքրող փոխարինում	դրամ	2000
38	ռետինե գլանակի փոխարինում	դրամ	2000

39	առաջնային լիցքավորման գլանի փոխարինում	դրամ	2000
40	մաքրող դանակի փոխարինում	դրամ	3000
41	դոզավորող դանակի փոխարինում	դրամ	3000
42	մատուցի Canon MF421dw և համարժեք լազերային տպիչ սարքերի վերանորոգում (առանց պահեստամասերի)	դրամ	0
43	մատուցի Canon MF421dw և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	8000
44	մատուցի Canon MF421dw և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	12000
45	մատուցի Canon MF421dw և համարժեք լազերային տպիչ սարքերի թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	6000
	KYOCERA ECOSYS M2040dn		
	որից՝		
46	մատուցի KYOCERA ECOSYS M2040dn համարժեք լազերային տպիչ սարքերի դիագնոստիկա	դրամ	0
47	մատուցի KYOCERA ECOSYS M2040dn և համարժեք լազերային տպիչ սարքերի պրոֆիլակտիկա	դրամ	5000
48	մատուցի KYOCERA ECOSYS M2040dn և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում(առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 7 100 էջ՝ փոխարինման պահից	դրամ	3000
49	մատուցի KYOCERA ECOSYS M2040dn և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում(ներառյալ տոների): Երաշխիք՝ նվազագույնը 7 100 էջ՝ փոխարինման պահից	դրամ	6000
	HP Color LaserJet Pro MFP M477fnw		
	որից՝		

50	մատուցի HP Color LaserJet Pro MFP M477fnw համարժեք լազերային տպիչ սարքերի դիագնոստիկա	դրամ	0
51	մատուցի HP Color LaserJet Pro MFP M477fnw և համարժեք լազերային տպիչ սարքերի պրոֆիլակտիկա	դրամ	6000
52	մատուցի HP Color LaserJet Pro MFP M477fnw և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում(առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	դրամ	4000
53	մատուցի HP Color LaserJet Pro MFP M477fnw և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում(ներառյալ տոները և չիպի փոխարինում): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	դրամ	10000
54	թմբուկի փոխարինում	դրամ	5000
55	մատուցի HP Color LaserJet Pro MFP M477fnw և համարժեք լազերային տպիչ սարքերի վերանորոգում (առանց պահեստամասերի)	դրամ	0
56	մատուցի HP Color LaserJet Pro MFP M477fnw և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	14000
57	մատուցի HP Color LaserJet Pro MFP M477fnw և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	10000
58	մատուցի HP Color LaserJet Pro MFP M477fnw և համարժեք լազերային տպիչ սարքերի թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	12000
	Hp color Ljpro MFP M 281 fdw		
	որից՝		
59	մատուցի Hp color Ljpro MFP M 281 fdw համարժեք լազերային տպիչ սարքերի դիագնոստիկա	դրամ	0

60	մատուցի Hp color Ljpro MFP M 281 fdw և համարժեք լազերային տպիչ սարքերի պրոֆիլակտիկա	դրամ	6000
61	մատուցի Hp color Ljpro MFP M 281 fdw և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում (առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	դրամ	4000
62	մատուցի Hp color Ljpro MFP M 281 fdw և համարժեք լազերային տպիչ սարքերի տոներային քարթրիջի լիցքավորում (ներառյալ տոները և չիպի փոխարինում): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	դրամ	10000
63	թմբուկի փոխարինում	դրամ	5000
64	մատուցի Hp color Ljpro MFP M 281 fdw և համարժեք լազերային տպիչ սարքերի վերանորոգում (առանց պահեստամասերի)	դրամ	0
65	մատուցի Hp color Ljpro MFP M 281 fdw և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	10000
66	մատուցի Hp color Ljpro MFP M 281 fdw և համարժեք լազերային տպիչ սարքերի վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	12000
67	մատուցի Hp color Ljpro MFP M 281 fdw և համարժեք լազերային տպիչ սարքերի թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	դրամ	10000
Ընդամենը			**293500**

Հավելված N 2
«06» փետրվարի 2025թ. կնքված
ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

Ծառայության														
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	50311240/1	Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ	60 000	60 000	60 000	135 000	135 000	135 000	210 000	210 000	210 000	300 000	300 000	300 000	300 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մրցակցության պաշտպանության
հանձնաժողով
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Էդմոնդ Միրզախանյան» ԱՁ
Հասցե՝ ք. Երևան Պարոնյան 1
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930059220940100
ՀՎՀՀ 83629841

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«___» փետրվարի 2025թ. կնքված
ՄՊՀ-ՄԱԾՁԲ-25/7 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցվածծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«___» փետրվարի 2025թ. կնքված
ՄՊՀ-ՄԱԵՁԲ-25/7 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏՆ

պայմանագրիարդյունքըՊատվիրատուինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվումէ,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
ՊատվիրատուիանունըԿատարողիանունը

(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն